Каким образом произошла данная трансформация за столь короткий срок? Хемшилы Краснодарского края - единственная группа хемшилов, которая соседствует с амшенскими армянами, более того, некоторая их часть проживает в одном населенном пункте х. Калинин Апшеронского района. Конечно, живя в Средней Азии, хемшилы не могли не знать, что их язык похож на армянский, но сильное отличие говора от литературного армянского и случайные встречи с носителями армянского языка не давали им возможности осознать свою близость. После того, как они поселились рядом с амшенскими армянами, они могли говорить и понимать друг друга. Несмотря на это, осознание родства пришло не сразу, значительные культурные отличия, в первую очередь в религии, доминировали над лингвистическим родством. Свое будущее хемшилы Краснодарского края видели с турками-месхетинцами, с которыми они были одной веры, общей трагической исторической судьбой и похожими политическими проблемами касающимися проживания в крае. Общественные лидеры хемшилов в 1994 г. вынашивали планы основания хемшилской общественной организации, но остановились на том, что будут защищать свои права вместе с турками - месхетинцами через общество "Ватан" (Родина).¹⁷

После 2002 г., стало ясно, что турки-месхетинцы по программе Гос. Депа США в большинстве своем покидают Краснодарский край, а хемшилы не попадают в эту программу. Лидеры хемшилов попытались зарегистрировать Краевую общественную организацию "Хомшеци", но безуспешно. Не имея других союзников, хемшилские лидеры стали большим интересом относиться к связям с ам-

шено - армянской общественностью. Начался поиск своей идентичности, следствием чего стало ходатайство в институт Этнологии им. Миклухо Маклая РАН. Отрывок: "Мы, представители народа хемшилов (самоназвание хомшеци) обращаемся к вам с просьбой оказать содействие в получении исторической справки, в которой бы подтверждалась наша этническая самобытность, как отдельного народа хемшилов (хомшеци)".¹⁸

Ситуация изменилась и в бытовом сожительстве, если в конце прошлого века о совместных браках между хемшилами и амшенскими армянами не могло быть и речи, то сегодня они происходят. Обучаясь в одной школе с детьми амшенских армян хемшилские дети посещают факультативы по изучению армянского языка. Несколько лет назад, при участии АНИК центра "Амшен", был организован народный танцевальный коллектив "Фуртуна", где выступают вместе дети хемшилов и амшенцев.

Все это говорит о наметившихся сдвигих в культурном диалоге, но нужно быть осторожными при оценке этих событий и понимать всю деликатность происходящих процессов. Культурные связи амшенских армян с хемшилами могут стать тем мостом, через который можно будет стать ближе к нашим соотечественникам армяно - мусульманам.

Ардаваст Тулумджян
Председатель АНИК центра "Амшен"
Краснодарский край, г. Апшеронск
2009г.

Библиографические ссылки.

1. Хачикян Л. Страницы истории амшенских армян. // Амшенская библиотека. Краснодар, 2002.
2. Торлакян Б. Этнография амшенских армян. // Амшенская библиотека. Краснодар, 2002.
3. Тулумджян А. Земля и корни. // "Анив" N 3(3), 2005.
4. Овчинников Н. Апшеронский район, 2005.
5. Ханзадян С. Возмутительный отказ. // Амшенская библиотека. Краснодар, 2002.
6. Хачикян Л. Страницы истории амшенских армян. // Амшенская библиотека. Краснодар, 2002.
7. Тапян А. Армянское население от Черного моря до Карина. Вена, 1921, (на арм. яз.).
8. Торлакян Б. Страницы из истории амшенских армян XVII - XVIII вв. // Историко - филологический журнал. Ереван, 1972, N 4, (на арм. яз.).
9. Тапян А. Армянское население от Черного моря до Карина. Вена, 1921, (на арм. яз.).
10. Тулумджян А. Земля и корни. // "Анив", N 3(3). 2005.
11. Кузнецов И. Хемшилы Краснодарского края в 1980 - 1990 - е гг. // Старый свет: Археология. История. Этнография. Краснодар, 2000.
12. Там же.
13. Кузнецов И. Одежда армян Понта. Москва, 1995.
14. Ачарян Гр. Исследования амшенского диалекта. Ереван, 1947, (на арм. яз.).
15. Голос Амшенский. Том 3. Составитель и ред. Варданян С., Ереван, 1989.
16. Полевые материалы автора. 2002 - 2003 гг.
17. Кузнецов И. Турки - хемшилы или исламизированные армяне? // Диаспоры. N 1-2. М. 2000.
18. Ходатайство в институт этнологии им. Миклухо Маклая РАН. Архив автора.

Директору института этнологии и антропологии им. М.Маклая В.А.Тишкову
Заведующему отделом Кавказа С.А.Арутюнову

ХОДАТАЙСТВО

Мы, представители народа хемшилов (самоназвание - хомшеци) обращаемся к вам с просьбой оказать содействие в получении исторической справки, в которой бы подтверждалась наша этническая самобытность, как отдельного народа хемшилов (хомшеци).

В настоящее время, в связи с различными объективными и субъективными причинами представители нашего народа в различных официальных документах обозначены как: хемшилы, турки, грузины и пр. Такая же ситуация с фамилиями, окончания которых: турецкие - "оглы", грузинские - "дзе", русские - "ов", "ев" и пр.

Запрашиваемая историческая справка нам необходима для сохранения нашей этнической самобытности и представления по необходимости в различные государственные учреждения.

С уважением,

Салих-оглы Хасан Дурсунович, пенсионер, духовный лидер

Салих-оглы Мамуд, общественный лидер

Татар-оглы Камилль Харунович, преподаватель

Карач-оглы Сулейман Мухамедович, предприниматель

17 апреля 2002 год.

РОССИЙСКАЯ АКАДЕМИЯ НАУК

ИНСТИТУТ ЭТНОЛОГИИ И АНТРОПОЛОГИИ им. Н.Н.Миклухо-Маклая

117334 Москва, Ленинский пр-т, 32а
Тел.: (095) 938 1793 Факс: (095) 938 0600
Эл. почта: ANTHRU@IEA.RAS.RU

21.05.2003 № 4410/2173

на № _____

Уважаемый Салих-Оглы Хасан Дурсунович!

В ответ на ваш запрос направляем справку о хемшилах, подготовленную заведующим отделом Кавказа ИЭА РАН чл.-корр., д.и.н. С.А.Арутюновым.

С уважением,

САЛИХ-ОГЛЫ Хасану Дурсуновичу
Краснодарский край, Апшеронский район,
поселок Вперед, ул. Октябрьская, дом 47
Индекс 362562

Глубокоуважаемый Хасан Дурсунович!

В ответ на Ваш вопрос сообщая:

По имеющимся этнографическим и историческим данным, уже начиная с XI-XII вв. имело место интенсивное переселение армян из араратских и вандских районов исторической Армении в причерноморские районы Малой Азии, в частности в район Трапезунда (Трабзона), тогда занятый греческим Трапезундским царством, политически тесно связанным с Грузией. В дальнейшем район расселения этих армян, по имени одного из их князей, Хамама, получил название Хамамашен, позднее сокращенное в Хамшен или Амшен.

В ходе захвата большей территории Малой Азии (ныне Турции) переселившимися сюда из Средней Азии турками-сельджуками, а затем турками-османами значительная часть местного христианского населения (греческого, грузинского и армянского) приняла ислам. Этот процесс особенно интенсивно шел в XIV-XVI вв.

Большинство принявших ислам местных жителей вскоре вслед за этим перешли на турецкий язык и стали считать и называть себя турками. Однако, многие из них и по сей день сохранили память о своем прошлом греческом (трабзонские турки) или грузинском (месхетские турки) происхождении.

Другая же часть принявшего ислам населения, которая в силу меньшей интенсивности контактов с пришлыми турками сохранила свой прежний язык, превратилась в особые народности, занимающие как бы промежуточное положение между грузинами и турками (как алджарцы) или между армянами и турками (как хемшилы).

В 1944 году в ходе сталинских репрессий, проживавшие в Грузии хемшилы, бывшие советскими гражданами, были насильственно и противозаконно высланы в Среднюю Азию.

Таким образом, хемшилы (иначе хемшинлы, или хомшеци) должны рассматриваться как особый народ, этнически близкий к армянам, принявший в середине века ислам, говорящий на своем особом говоре амшенского диалекта армянского языка, сильно насыщенном заимствованными турецкими словами. Самоназвание хомшеци связано с названием региона близ Трабзона - Хамшен.

Хемшилы не являются ни грузинами, ни турками, хотя имеют с турками некоторую культурную близость, но близость их с армянами больше.

По международным нормам права, Российская Федерация, как правопреемница СССР, обязана признавать за хемшилами право на российское гражданство, на проживание в любом районе Российской Федерации, на юридическую и социальную защиту российской федеральной власти.

Любая дискриминация хемшилов по причине национальной и религиозной принадлежности противоречит принятым Россией международным обязательствам и может быть оспорена в соответствующих международных органах, в частности, в Страсбургском суде.

Окончания хемшилских фамилий могут быть любые - "оглы", "дзе", "ев", "ян" и пр., в зависимости от традиций и истории каждой конкретной семьи.

Зав. отделом Кавказа ИЭА РАН член-корр. РАН, д.и.н. С.А. Арутюнов

С. Арутюнов

ՄԻ ԿՈՐՄ ԹՈՂ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԸ, ՏԵՍ ՕՍՄԱՆՅԱՆԸ

Սկիզբը՝ 3-րդ էջում:

Երուսաղեմի արխիվը

Մեկ այլ կարևոր աղբյուր է Երուսաղեմի պատրիարքարանի արխիվը: Այս արխիվի առանձնահատկությունն այն է, որ այստեղ պահպանվում են վերոհիշյալ «Հանցագործությունների հետաքննիչ հանձնաժողովի» այսօր անհետացած որոշ փաստաթղթերի պատճենները: Այս պատճեններն այն տարիներին ռազմական արտակարգ ատյաններում աշխատող որոշ հայ պաշտոնյաների կողմից գաղտնի կերպով պատճենվել են ձեռքով՝ դատական գործերից: Սակայն վերոնշյալ արխիվը բաց չէ ուսումնասիրողների առջև: Մի բան, որ շատ սխալ է:

Դաշնակցության արխիվը

Իսկ Հայազոյուի՝ 20 միլիոն դոլարանոց շուրջի թեմա դարձած Դաշնակցության բոստոնյան արխիվը, թուրքական տեսակետի համաձայն, փակ է, իսկ ըստ հայկականի՝ բաց: Իրական դրության մասին կարող են հայտնել միայն այս արխիվներում աշխատելու համար գործունեություն ծավալած ուսումնասիրողները: Եթե անգամ փակ է, ինչպես որ դա ասում էր Հայազոյու, ապա այս արխիվը «սոցիալիստ ազգայնականության» ուղղությամբ գործունեություն ծավալած դաշնակցականների՝ այն օրերի քաղաքական քննարկումների վրա լույս սփռելու տեսանկյունից, հավանաբար, ուշագրավ տեղեկություններ է պարունակում, սակայն այս արխիվներից ձեռք բերվելիք ամենատարածված հայտնագործություններն անգամ չարժեն Հայազոյուի 20 միլիոն դոլարին, քանի որ չեն կարող արդարացնել դաշնակցականների հետ ոչ մի առնչություն չունեցող հարյուրհազարավոր մարդկանց զոհաբերումը թուրքական ազգայնամոլությանը:


Արամ Անտոնյանի փաստաթղթերը

Վավերագրերի մեկ այլ կարևոր խումբ է կազմում 1914 թ. գորահավաքի ժամանակ բանակում որպես նամակագրությունը և գրագրությունը ընթերցող պաշտոնյա ծառայած Արամ Անտոնյան անվամբ հայի՝ տեղահանությունից հետո որչ մնացած հայ տղամարդկանց, կանանց և երեխաների վկայություններն ու Հայեպի տեղահանության կոմիտեի գլխավոր քարտուղար Նայիմ բեյ անունը կրող մի թուրք պաշտոնյայից ստացած բազմաթիվ փաստաթղթեր, հեռագրեր և որոշումը պարունակող հուշերից կազմված գիրքը, որը վերնագրված է հետևյալ կերպ՝ «Նայիմ բեյի հուշերը. թուրքական պաշտոնական փաստաթղթերը՝ հայերի տեղահանության ու կոտորածների վերաբերյալ»: Քանի որ 1920 թ. հայերեն, 1965-ին էլ՝ ֆրանսերեն և անգլերեն տպագրված այս գրքում տեղ գտած վավերագրերի բնագրերը դեռևս չեն գտնվել, պաշտոնական պատմաբանները հակված են անուշադրության մատնելու այս աղբյուրը: Այնինչ այս հուշերի գիրքն ու որոշ արխիվային փաստաթղթեր համընկնում են միմյանց հետ: Անշուշտ, կան նաև անգլիական, ամերիկյան, գերմանական, ֆրանսիական, ավստրիական ու ռուսական արխիվները, որոնք առանձին հոդվածի նյութ կարող են ծառայել, ինչպես նաև այն տարիներին օսմանյան երկրում գտնվող մի փոքրամասնի, լրագրողների, հետազոտողների, օգնության կազմակերպությունների անդամների և մի շարք այլ անձանց ժողոված փաստաթղթերն ու տեղեկությունները: Ավելին՝ գոյություն ունեն հազարավոր գրքեր, որոնք կազմվել են այս բոլոր աղբյուրների օգնությամբ: Անշուշտ, կարևոր է բոլոր փակ արխիվների բացումը, սակայն, մեղմ ասած, էթիկայից դուրս է հասարակայնության մեջ մթնոլորտ ձևավորելը, թե «Եթե Դաշնակցության արխիվները

ը չբացվեն, ճշմարտությունը չի բացահայտվի»:

Ինչո՞ւ են անհետացել որոշ օսմանյան վավերագրեր

Երբ անդրադառնում ենք տեղական և արտասահմանյան արխիվային փաստաթղթերին, դատական արձանագրություններին, մամուլում հրատարակված տեղեկություններին, օրագրերին ու հուշերին, ապա պարզվում է, որ տեղահանության ընթացքում և հետագայում բազմաթիվ վավերագրեր են հափշտակվել կամ ոչնչացվել կասկածյալների կողմից: Դրանք գլխավորում են Հատուկ կազմակերպությանը պատկանող փաստաթղթերը:



Գյումուշխանեի Ա.Փրկիչ վանքը:

ը: Երկրորդ խումբն են կազմում Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեին վերաբերող նյութերը: Ստամբուլում կատարված դատավարության տարբեր միտերում ցուցմունքներ տված Միդիաթ Շյուքրյու Բեդան, Քյուչուք Թայյաթը և Ջիա Գյոքալիը հայտնում են, որ այդ փաստաթղթերը տարել է երիտթուրքերի կենտրոնական կոմիտեի անդամ դոկտոր Նազըմը (տե՛ս «Թաքվածի վերջալի»-ի 3543 համարը, 8-ը մայիսի, 1919 թ.):

Լքյալ գույքի գրանցամատյանները

Անհետացած փաստաթղթերի երրորդ խումբն են կազմում Օսմանյան կայսրության Ներքին գործերի նախարարությանը պատկանող որոշ վավերագրեր: Օրինակ՝ ասպարեզում չկան Նախարարների խորհրդի 1915 թ. մայիսի 30-ի տեղեկագրերը և 1915 թ. հունիսի 10-ի հրահանգի հիման վրա հիմնված Լքյալ գույքի հանձնաժողովների գրանցամատյանները (սույն հանձնաժողովները կազմավորվել էին հայերի գույքին հետևելու նպատակով): Շեքեթ Սյուրեյա Արեմիրն իր հուշերում նշում է, որ լսել է, թե Թայյաթ փաշան արտասահման փախչելուց առաջ «նախ մի ձամպուրկ թղթերով գնացել է Արնավուքթյոյի ափին (...) մի ամառանոցում բնակվող իր ընկերներից մեկի մոտ: Այդ փաստաթղթերն այրվել են վիլայի նեքեի հարկում գտնվող վառարանի մեջ»: (Այդ մասին տե՛ս «Էնվեր փաշան Մակեդոնիայից մինչև Միջին Ասիա» գրքի երրորդ հատորը, 1914-1922, Ռեմզի տպագրատուն, 1978 թ., էջ 468):

Հավիշտակված գինվորական փաստաթղթերը

Փաստաթուղթ են գողացել ոչ միայն տեղական, այլև արտասահմանցի գործիչները: Պատերազմի ժամանակ օսմանյան գլխավոր շտաբի պետի պաշտոնում հանդես եկած Հանս Ֆ. Լ. Ֆոն Սեքտը

Գերմանիա վերադառնալիս իր հետ է տարել օսմանյան գլխավոր շտաբին վերաբերող կարևոր փաստաթղթեր: Սադրազան (մեծ վեզիր) Իզզեթ փաշան 1918 թ. նոյեմբերի 6-ին գրած մի նամակով թե՛ իր բողոքն է արտահայտել այդ կապակցությամբ և թե՛ պահանջել է, որպեսզի փաստաթղթերի հետ միասին հետ վերադարձվեն նաև Թայյաթի, Էնվերի և Ջեմալի գլխավորությամբ Գերմանիա ճողոպտածները: Թե՛ն Բեռլինը խոստացել է վերադարձնել վավերագրերը, բայց երբեք էլ չի կատարել իր խոստումը: Հանս Ֆ. Լ. Ֆոն Սեքտը պատմում է, որ իր պաշտոնին գտնվելիս պարտադիր է եղել պաշտոնական հրամաններին, գաղտնի որոշումներին և անվավեր լինելը ցույց տվող

ինչպես պետք է վերաբերվել աքսորվող քարավանների միջից դավանափոխ եղողների հետ, որից հետո նշվում է հետևյալը. «... և մեր այս հաղորդումն անհրաժեշտ անձանց հատուկ կերպով հղվելու և տվյալ հեռագրի պատճենը հեռագրատան միջոցով հասնելուց հետո ոչնչացնել» (BOA/DH.SFR., nr. 54/100): Մեկ այլ օրինակ է «Անձամբ» հատուկ գրությամբ 1915 թ. հունիսի 23-ին Մոսուլ ու Դեր Ջոր հղված մի հեռագիր: Հայերի վերաբնակեցման խնդրի մասին որոշ վերին աստիճանի կարևոր հրահանգներ տվող հեռագիրն ավարտվում է հետևյալ ձևով. «Հաղորդվում է, որ տվյալ ծածկագիր հեռագիրը հասցեատերերին ներկայացվելուց հետո ոչնչացվի» (BOA/DH.SFR. nr., 54/41): Փաստաթուղթ այրելու գործողությունը շարունակվել է նաև (Թուրքիայի) պարտությունից հետո՝ զինադադարի ժամանակաշրջանում: Թայյաթ փաշայի կառավարության՝ հրաժարական տալուց հետո 1918 թ. հոկտեմբերի 14-ին կառավարություն կազմած Լիմեթ Իզզեթ փաշան իր վրա է վերցրել նաև Ռազմական նախարարի պարտականությունները: Եթե հայացք գցենք Հատուկ կազմակերպության վերջին ղեկավար Հյուսամեդիին էրթյուրքի հուշերին, ապա կտեսնենք, որ վերոհիշյալ փաշայի առաջին գործն է եղել «Հատուկ կազմակերպության տնօրինության աշխատանքների անմիջապես դադարեցման և արխիվների վերացման մասին հրահանգը»:

Ոչնչացում փոստում

Վավերագրերի ոչնչացումը շարունակվել է, երբ պարզ է դարձել, որ պատերազմն ավարտվելու է պարտությամբ: Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանի կողմից իրականացված դատաքննության ժամանակ՝ 1914-1918 թթ. պաշտոնավարած Նախարարների խորհրդի անդամներին վերաբերող դատավարության 1919 թ. հունիսի 3-ի նիստում, կապի նախկին նախարար Հյուսեին Հաշիմը հայտնում է, որ այրվել են Ռազմական նախարարությանը պատկանող փաստաթղթերը: Որից հետո այս խնդրի հետ առնչություն ունեցած Չաբալջայի փոստի և հեռագրության տնօրենի նախկին տեղակալ Օսման Նուրի էֆենդուի դեմ հարուցվում է դատական գործ՝ փաստաթուղթ այրելու մեղադրանքով: Դատու սկսվում է 1919 թ. օգոստոսի 4-ին: Ամբաստանյալն իր ցուցմունքում ասում է, թե «Որոշ փաստաթղթեր այրել են տրված հրամանի հիման վրա: Պետերս, պատասխանատվությունն իրենց վրա վերցնելով, ասացին՝ այսինչ թվականից մինչև այնինչ թվականի փաստաթղթերն այրիր, ես էլ այրեցի»: Տվյալ դատաքննության արդյունքը հայտնի չէ: (Այդ մասին տե՛ս «Ալեմդար» օրաթերթի 1919 թ. օգոստոսի 5-ի և 6-ի համարները):

Ռեֆիք Հալիդ Քարայը զինադադարի ժամանակաշրջանում եղել է Փոստի և հեռագրության գլխավոր տնօրենը: Երբ «Ալդեդե» ամսագրում 1948 թ. հրատարակվում է տվյալ ժամանակաշրջանի մասին իր հուշերը, բավականին երկար մի նամակ է ստանում Փոստի, հեռագրերի և հեռախոսի վարչությունում երկար տարիներ ծառայության մեջ եղած Հ. Սադըք Դուրաքան անվամբ մի պաշտոնյայից: Ռեֆիք Հալիդը հետագայում իր կազմած գրքում նույնությամբ հրատարակում է նաև այդ նամակը, ըստ որի՝ վերոհիշյալ պաշտոնյան պատմում է, թե որպեսզի կանխվի զինադադարի ժամանակ Փոստի, հեռագրերի և հեռախոսի վարչությունում պետական հաղորդակցությանը վերաբերող փաստաթղթերը թշնամու ձեռքն անցնելը, Մեմեդ Էմին բեյի կողմից բոլոր կենտրոններին հրաման է հղվել, որ վերացվեն բոլոր առկա պաշտոնական փաստաթղթերը, հեռագրերի պատճեններն ու բնագրերը: (Այդ մասին տե՛ս Մինեթաբ Իլեմիհրաբի «Ջինադադարի շրջանի հուշերը» գիրքը, «Ինքըլաբ» տպագրատուն, 1992 թ., էջ 271-272):

Էնվերի և Թայյաթի հեռագրատները

Յուզբաշի Սելահեդդինը իր հուշերում հաղորդում է, որ Էնվերն այնուհետև վերացրել է պաշտոնական աղբյուրներից գերմանացիներին սիրաշահելու համար ուղարկված իր հեռագրերը, ինչպես նաև՝ հետագայում իր տանը տեղադրված «հեռագրատնից» ուղարկվածները: (Այդ մասին տե՛ս Իլհան Սելջուկի «Յուզբաշի Սելահեդդինի վեպը» գրքի առաջին հատորի 292 էջը, Ռեմզի տպագրատուն, 1993 թ.):

Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ և արտաքին գործերի նախարար Հալիլ Մեմեթեյի հուշերից տեղեկանում ենք, որ տեղահանության համար ղեկավար ուղղել հանդիսացած և նախկինում հեռագրատանն աշխատած Թայյաթը հատուկ գիծ է անցկացրել դեպի իր տուն և իր նամակագրությունը կատարել է այստեղից: (Տե՛ս «Օսմանյան խորհրդարանի նախագահ Հալիլ Մեմեթեյի հուշերը» գիրքը, կազմող՝ Իսմայիլ Արաբ, Հյուրիլեթի հրատարակչություն, էջ 216):

Այրված փաստաթղթերը

Օսմանյան կառավարության արխիվի ներքին գործերի նախարարության արձանագրություններում անգամ կան գրառումներ՝ պետության պաշտոնական փաստաթղթերի վերաբերյալ, որոնց վրա նշված է «ընթերցելուց հետո այրելու» պահանջը: Այսպես, օրինակ, 1915 թ. հունիսի 22-ին Թայյաթ փաշայի ստորագրությամբ Անվտանգության գլխավոր տնօրինության կողմից որոշ վավերների և մյութասարիֆների՝ անուն առ անուն ուղղված ծածկագիր հեռագրերում տեղեկացվում է, թե

Փաստաթղթերի ոչնչացումներ՝ անհատների կողմից

Կարկառուն իրապատական, կայ- մակամ, վալի լինելուց բացի նաև Միու- թյուն և առաջադիմություն կուսակցու- թյան վերջին կառավարության մեջ Հա- սարակական աշխատանքների նա- խարար եղած, Ադանայի տեղահանու- թյան դեպքերին մասնակցություն ցու- ցաբերած լինելու համար ձերբակալ- ված ու Մալթա աքսորված Ալի Մյունի- ֆը հայտնում է, թե «Իթիլաֆականների խրախուսմամբ ձերբակալվում և դատի էին տրվում մի կողմից՝ պատերազմա- կան հանցագործները, մյուս կողմից էլ՝ նշանավոր իրապատականները (...): Ինձ հայտնեցին, որ տունս էլ են խու- զարկելու: Թեև ես կարծում էի, թե որևէ կարևոր բան չեմ թողել, սակայն մեր տունը խուզարկվեց, և ես ձերբակալ- վեցի նամակագրությանը վերաբերող որոշ փաստաթղթերի պատճառով, որ գտել էին նրանք (...): Ինձ ուղղված մե- ղադրանքը կայանում էր նրանում, որ ես իրապատական հայրուհի էի (...): Մի ճամպուրկի գրայնում (...) Ադանայից ներքին գործերի նախարար- ին իմ կողմից հղված հեռագրի սևագ- րություններն էին անցել նրանց ձեռքը (...): Հիրավի, թեև ժամանակին ավելի կարևոր փաստաթղթերը ոչնչացրել էի, դա մոռացել էի ճամպուրկի փոքր գր- պանում (...): Այդ փաստաթուղթը, որ մոռացել էի վերացնել, օգտագործվում էր իմ դեմ՝ որպես հանցանքի ասպա- ցույց: (Տես Թահա Թորոս, «Ալի Մյունիֆ թեյի հուշերը», ԻՍԻՍ Իրատարակչու- թյուն, 1996 թ., էջ 96-97):

Ազգային ազատագրական պայքա- րի տարիներին Արդարադատության նախարար աշխատած Ահմեդ Ռեֆաթ Չալըքան հետևյալն է նշում իր հուշե- րում. «Ղատախազը ինձ հաղորդեց, որ մի օր վիլայեթ է հասել մի ծածկագիր հեռագրի, մի խառը հանձնաժողով Կայսերի (Կեսարիա) գալով՝ քննելու է տեղահանության գործը, և որ կասկած- յալների դեմ իրականացվելու է հե- տաքննություն ու դատական հե- տապնդում, նրանց տներն էլ խու- զարկվելու են...: Ղատախազը հետ միասին տուն եկանք. ես այրեցի փաս- տաթղթերս ու հուշերս»: (Ահմեդ Ռե- ֆաթ Չալըքայի հուշերը, Հուրիդ Չալի- թայի անձնական տպագրատուն, 1992 թ., էջ 7, 15-16):

Անգլիական արխիվից

1919 թ. հունվարի 24-ին անգլիացի- ների ձեռքն է ընկնում մի հեռագիր, որը Ներքին գործերի նախարարությունը հղել էր Անթեպի (Այնթապի) վիլայեթին: Հեռագրով պահանջվում է վերացնել գորահավաքից ի վեր տվյալ շրջան ու- ղարկված պաշտոնական հեռագրերի բնագիր օրինակները (FO371/4174/ 15450: folio 182): 1919 թ. հունիսի 17- ին, երբ տվյալ ժամանակաշրջանի Արտգործնախարար Սաֆա թեյն այդ առթիվ իր ղեկավարություն է արտահայ- տում անգլիական Գերագույն կոմիսս- րությանը, այնուամենայնիվ ընդունում է, որ Ղիարբեթիի Հեռագրության վարչությունը կազմակերպելու (գավառնե- րին) ու նահիյեներին (գյուղայնություն) մի շրջաբերական է ուղարկել՝ 1914- 1918 թթ. ստացված փաստաթղթերի բնագրերը վերացնելու հրահանգով (FO371/4174/15450: folio 182): Հիմա Յուսուֆ Հալաջուլուի դիմենք հետևյալ հարցով. «Արդյոք ինչե՞ր էին գրված այդ փաստաթղթերում, որ այդ- քան անհրաժեշտ էր դրանց ոչնչացու- մը»:

Թաներ Աբջամի՝ Յուսուֆ Հալաջուլուին ուղղված քննադատությունները

Խնդիրը միայն վավերագրերի բա- ցակալությունը չէ: Հարցեր են առաջա- մով:



Տրապիզոնի հայկական եկեղեցու որմնակարներից:

Ունեմ նաև առկա փաստաթղթերը ազ- նիվ կերպով օգտագործելու առումով: Այս առումով որպես օրինակ կարող են ծառայել թուրքական պաշտոնական տեսակետը պաշտպանելու նպատա- կով արվող այն պնդումները, թե տա- րագրված հայերի սեփականության արժեքները Լքյալ գույքի հանձնաժո- ղովների կողմից ուղարկվել են իրենց տերերին: Այս պնդումը կրկնվում է նաև Յուսուֆ Հալաջուլուի կողմից՝ իր «Հա- յոց տեղահանությունը և ճշմարտու- թյունները (1914-1918)» գրքում (էջ 69): Թաներ Աբջամի իր վերջին գրքում հետևյալն է ասում դրա կապակցու- թյամբ. «Թուրքական պաշտոնական տեսակետը պաշտպանելու նպատա- կով գրված մի աշխատության մեջ առաջ է քաշվում այն տեսակետը, թե «վաճառված սեփականությունների գներն ուղարկվել են իրենց տերերին» Լքյալ գույքի հանձնաժողովների կող- մից: Հետևապես՝ աքսորի վայրերը հա- սած գաղթականներն իբրև թե այդ գու- մարներով իրենց գործն են հիմնել և հարմարվել նոր բնակավայրերին» (Տես՝ Յուսուֆ Հալաջուլուի «Հայոց տեղահանությունը և ճշմարտություն- ները (1914-1918)» գրքի 69-րդ էջը): (...) Սույն տեսակետն առաջ քաշած անձը 1989-1992 թթ. եղել է Կառավա- րության Օսմանյան պետական ար- խիվների գլխավոր տնօրենը, իսկ 1993 թվականից ի վեր հանդիսանում է Թուրքական պատմական ընկերության նախագահը: Հեղինակը, որպես իր պնդման ապացույց, բերում է 3 օսման- յան փաստաթուղթ: Ուշագրավն այն է, որ որպես փաստարկ ներկայացվող այս հեռագրերից և ոչ մեկի բովանդա- կությունը չի պարզաբանվում, և որ տվ- յալ փաստաթղթերից ոչ մի հղում չի ար- վել: Ըստ էության, եթե հղում արվեր, ապա կլիներ հետևյալ պատկերը. այս երեք հեռագրերն էլ վերաբերում են միևնույն դեպքին և հղվել են միևնույն օրը երեք տարբեր վայրերի հասցեա- տերերին: Ավելին՝ տվյալ փաստաթղ- թերը որևէ կապ չունեն հայերի կողմից լքված գույքերի վաճառքից ստացված եկամուտը նրանց վերադարձնելու խնդրի հետ: (...) Ինչպես տեսնում ենք, հեռագրերը վերաբերում են միայն էս- քիչեհիդից հայերի ապրանքների վա- ճառքից ստացված գումարը Հալեպ ու- ղարկվելուն, որպեսզի փակվեն տեղա- հանության ժամանակ կառավարու- թյան արած ծախսերը: Այն հանգաման- քը, որ Օսմանյան արխիվների գլխա- վոր տնօրենը եղած, ուզած թույլին արխիվում գտնվող ամեն մի արժա- նագրության և ամեն մի վավերագրի հասու լինելու հնարավորությունն ունե- ցած մեկը չի կարողացել գեթ մեկ փա- տաթուղթ գտնել առ այն, թե հայերը տարագրված վայրերում ստացել են իրենց թողած գույքերի փոխհատուցու- մը, ինչպես նաև՝ այն, որ տվյալ անձն անգամ դիտավորյալ կերպով խեղա- թյուրելով է օգտագործում որոշ նյու- թեր, որոնք ոչ մի առնչություն չունեն տվյալ խնդրի հետ, արդեն իսկ բավա- րար է՝ որոշ բաներ բացատրելու առու- մով»:

1397 հոգու մասին սուտը

Թաներ Աբջամի իր վերոնշյալ գր- քում հարցականի տակ է դնում նաև այն փաստարկը, որ շատ հաճախ է օգտագործվում, որպեսզի հաստատ- վի, թե տեղահանության նպատակը չի եղել հայերի բնաջնջումը: Ըստ այդ պնդման, որն առաջին անգամ ար- տահայտվել է Քամուրան Գյուրյունի «Հայկական թղթապանակ» գրքում (էջ 88), որից հետո կրկնվել նաև Յու- սուֆ Հալաջուլուի «Հայոց տեղահա- նությունը և ճշմարտությունները (1914-1918)» աշխատության մեջ՝ «Տեղահանության ժամանակ որոշ պաշտոնյաներ թույլ են տվել չարաշ- ահումներ, բայց հիմնվել է մի հա- տուկ հետաքննող հանձնաժողով, և մեղավորները հանձնվել են արտա- կարգ դրության դատարաններին: Հետաքննություն է սկսվել 1397 հո- գու դեմ, որոնց մեծ մասը ենթարկվել է տարբեր պատիժների, այդ թվում՝ մահապատժի»:

Հիմա կրկին ընթերցենք Թաներ Աբջամի. «Երբ առանձին-առանձին անդրադառնում ենք այն 12 փա- տաթղթերին, որ բերել է Հալաջուլու- ն՝ որպես ապացույց «ծանր պա- տիժների ենթարկվելու» մասին, ապա տեսնում ենք, որ տվյալ վավե- րագրերից և ոչ մեկը որևէ կապ չունի հայերի դեմ հանցանք կատարած պաշտոնյաների դատավարության ու պատժվելու հետ: Տվյալ նյութերն առնչվում են միայն այնպիսի հանցա- գործությունների, ինչպիսիք են հայե- րի թողած գույքը կողոպտելը, առևանգելը, կաշառելը և պարտագ- րելը, և դրանց մեծ մասն էլ արդեն իսկ որևէ կապ չունեն դատավարու- թյան հետ (...): Հալաջուլուն, որը վե- րոհիչյալ փաստաթղթերը ներկայաց- նում է որպես «ռազմական ասոյա- նում կատարված դատաքննության» ու «ծանր պատիժներ ստանալու» օրինակներ, չի բավարարում այդ- չափ խեղաթյուրումներով և չի քաշ- վում անգամ իր տեսակետին որպես ապացույց բերել նաև հայերի դեմ հանցանք գործելու պատճառով գո- վեստի արժանացած պետական պաշտոնյաների մասին նյութեր: Օրի- նակ՝ փաստաթղթերից մեկն այն մա- սին է, թե Ջեմալ փաշայի կողմից պաշտոնազրկված մի կայմական (գավառապետ) արժանացել է Թալ- յաթ փաշայի գովաբանությանը և վե- րադարձվել իր պաշտոնին: (...) Այն, որ այս փաստաթուղթը ներ- կայացվում է որպես հայերի դեմ հան- ցանք գործած պետական պաշտոն- յաների՝ տարբեր պատիժների են- թարկված լինելու օրինակ՝ ընդհուպ մինչև մահապատիժ, պետք է ընկալ- վի որպես ամոթ, ավելին՝ հանցանք՝ կատարված գիտնականի կողմից»:

«Թարաֆ» 25.05.2008 <http://www.taraf.com.tr/makale/728.htm> Թարգմանությունը՝ ՄԵԼԻՆԵ ԱՆՈՒՄՅԱՆԻ akunq.net

ԱՐԴՎԻՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԿՐՈՆԱՓՈՒՆ ՀԱՄՇԵՆԱԿԱՅԵՐԻ ԵՐԳԵՐԻՑ

Քա՛, յես քեզի ամա

Քա՛, յես քեզի ամա, օ՛յ, Աս աշխարհս քօլէ չի՞մ թա, օ՛յ, Քա՛, յես քեզի ամա, օ՛յ, Յէս ինձիգի ցվօնէ չի՞մ թա, օ՛յ, Ասա՛, սէվդամ, ասա՛, սէվդամ, օ՛յ, օ՛յ, Քա՛, քու դարդէթ շաղ ա սէվդամ, օ՛յ, օ՛յ, Քա՛, յես քեզի ամա, օ՛յ, Գալաշ էլլիմ փէչէ չի՞մ թա, օ՛յ, Քա՛, յես քեզի ամա, օ՛յ, Մարթու հողէ թէնէ չի՞մ թա, օ՛յ, Ասա՛, սէվդամ, ասա՛, սէվդամ, օ՛յ, օ՛յ: Քա՛, քու դարդէթ շաղ ա, սէվդամ, օ՛յ, օ՛յ: Քա՛, յես քեզի ամա, օ՛յ, Սէրդիդ մէչէ հօքի էլլիմ, օ՛յ, Քա՛, յես քեզի ամա, օ՛յ, Աչվէնօւթ աստաղ էլլիմ, օ՛յ, Ասա՛, սէվդամ, ասա՛, սէվդամ, օ՛յ, օ՛յ, Քա՛, քու դարդէթ շաղ ա, սէվդամ, օ՛յ, օ՛յ... *խոսքի և երաժշտ. հեղինակներն անհայտ են:*

Քա՛, ես քեզ համար

(թարգմանություն) Քա՛, ես քեզ համար, օ՛յ, Այս աշխարհը չե՞մ վառի, օ՛յ, Քա՛, ես քեզ համար, օ՛յ, Ես ինձ չե՞մ սպանի, օ՛յ, Ասա՛, իմ սեր, ասա՛, իմ սեր, օ՛յ, օ՛յ, Քա՛, քու դարդը շատ է, իմ սեր, օ՛յ, օ՛յ Քա՛, ես քեզ համար, օ՛յ, Քամի լինեմ չե՞մ փչի, օ՛յ, Քա՛, ես քեզ համար, օ՛յ, Մարդու հողը չե՞մ դնի, օ՛յ, Ասա՛, իմ սեր, ասա՛, իմ սեր, օ՛յ, օ՛յ: Քա՛, քու դարդը շատ է, իմ սեր, օ՛յ, օ՛յ, Քա՛, ես քեզ համար, օ՛յ, Սրտիդ մեջ հոգի լինեմ, օ՛յ, Քա՛, ես քեզ համար, օ՛յ, Աչքերիդ աստղ լինեմ, օ՛յ, Ասա՛, իմ սեր, ասա՛, իմ սեր, օ՛յ, օ՛յ, Քա՛, քու դարդը շատ է, իմ սեր, օ՛յ, օ՛յ: *1 Քա - կանանց և աղջկաներին դիմելու ձև:*

Շաղ դարթ ունիմ

Աս արվանա թեզ վիլ էլա, բարգի չի գայիմ, Շաղ հազ գէնիմ, ամա անու առնու չի գայիմ, Օբօլ էնիմ, էրթամ, գասիմ, էրթա չի գայիմ, Օ՛ֆ, ի՞նչ էնիմ հիմի, շաղ դարթ ունիմ, շաղ:

Ավիտ առի ծիգաա մէ, քօլէ չի գայիմ, Ի մայէ իմ դադին գասա, խէմէ չի գայիմ, Շաղ քաղձէնցա, ամա ինչիզ ուղէ չի գայիմ, Օ՛ֆ, ի՞նչ էնիմ հիմի, շաղ դարթ ունիմ, շաղ:

Շատ դարդ ունեմ (թարգմանություն)

Այս առավոտյան շուտ վեր կացա, պառկել չեմ կարող, Շատ եմ սիրում, բայց նրան առնել չեմ կարող, Թողնեմ, գնամ, ասում եմ, գնալ չեմ կարող, Օ՛ֆ, ի՞նչ անեմ հիմա, շատ դարդ ունեմ, շատ:

Ձեռքս առա մի ծխախոտ, վառել չեմ կարող, Իմ մայրն իմ հորը կասի, ծխել չեմ կարող, Շատ քաղցեցի, բայց ոչինչ ուտել չեմ կարող, Օ՛ֆ, ի՞նչ անեմ հիմա, շատ դարդ ունեմ, շատ:

Հոգուս մեջ դրեցի, հանել չեմ կարող, Շատ դարդ ունեմ, բայց ոչ ոքի ասել չեմ կարող, Մաքրիլում՝ սիրած ունեմ, թողնել չեմ կարող, Ի՞նչ անեմ հիմա, շատ դարդ ունեմ, շատ: *1. Մաքրիլա (այժմ՝ Քեմալփաշա) գյուղը գտնվում է Խոփայի գավառում:*

Թարգմանությունը՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Հայաստանի Գրողների միության վարչությունը շնորհավորում է արծակագիր, հրապարակախոս ՍԵՐՎԵՅ ՎԻՐՂԱՆՅԱՆԻ ծննդյան 60-ամյակի առթիվ «Գրական թերթը» միանում է շնորհավորանքին



Ռոզա Եղիազարյան - Սերգեյ, 60 - ամյակդ է, ուրեմն խոսենք անցածդ ուղու մասին: Առաջին գիրքդ՝ «Հրեղեն ձին», լույս տեսավ 1981թ., մայրս հաճախ էր այն կարդում: Պատմիր, ինչպե՞ս այն ծնվեց:

Սերգեյ Վարդանյան - 1978թ. աշխատում էի «Պիոներ կանչում» (այժմ՝ «Կանչ»), կոչ արեցի Հայաստանի, Կրաստանի, Աբխազիայի, Ադրբեջանի, Ղարաբաղի, Նախիջևանի, Ռուսաստանի հայկական դպրոցների աշակերտներին, որ մեծահասակներից բարբառով գրառեն բանահյուսական նյութեր և ուղարկեն: Թերթն ուներ 220 հազար տպաքանակ, և կոչը լայն արձագանք գտավ: Երկու տարի նրանց գրի առած հեքիաթները, երգերը, հանելուկները տպագրում էի թերթում: Շատ էի չարչարվում, ուսումնասիրում էի բարբառները, որպեսզի սխալներն ուղղեի, նաև բառարաններ կազմեի: Ի վերջո, լավագույններն ամփոփեցի «Հրեղեն ձին» գրքում, որի 15 հազար տպաքանակը արագ սպառվեց: Շատերը մվերի համար մի քանի հատ էին գնում: Վերջերս պետհամալսարանի կին դասախոսներից մեկն ասաց, որ այդ գիրքը պատանեկան տարիներին շատ էր սիրում և դրել էր իր օժիտի մեջ:

1982թ. աշխատում էի «Պիոներ» (այժմ՝ «Արթուր») ամսագրում, այնտեղ էլ կոչ հրապարակեցի: Կրկին բավականին նյութ հավաքվեց և հրատարակեցի «Թագավորի երազները» ժողովածուն: «Պիոներն» էլ ուներ 65-70 հազար տպաքանակ: Ինչու՞ եմ շեշտում, որովհետև այսօր «Կանչն» էլ, «Արթուրն» էլ պետպատվերի օգնությամբ հագիվ են գոյատևում: Այնինչ նախկինում նրանք Հայաստանի հետ էին կապում նաև ներքին սպիտակ հայերին և ամեն ինչ պետք է անել նրանց տպաքանակները մեծացնելու համար: Հիշում եմ, 1984 թվականն էր, Ադրդեական Ինքնավար Մարզում հայկական գյուղեր էի փնտրում, մեքենայով անցնում էինք Պրոլետարսկի գյուղով, աչքս ընկավ տան մոտ նստած մի տարեց մարդու, որ «Պիոներ կանչ» էր կարդում: Մեքենայից իջա, ծանոթացա: Անունը Մարգար Ղուկասյան էր, 84 տարեկան էր, ծնվել էր Տրապիզոնի մոտակա Կալաֆկա գյուղում: Դա նշանավոր Տեր Կարապետի գյուղն էր, նա մահապատժի վտանգն անտեսելով, տարիներ շարունակ ծածուկ գնում էր բռնի մահմե-

ղականացված համաճարակի գյուղերը, շատերին էր դարձի բերում: Պարզվեց, այդ մարդը Տեր Կարապետի թոռան՝ Տեր Խորենի թոռն էր: Իսկ «Պիոներ կանչ» բաժանորդագրվել էր իր համար: Հիմա ոչ միայն Պրոլետարսկիում, այլև Հայաստանի գյուղերում թերթ չեն կարդում:

Այս ամռանը Երևանում հանդիպեցի մի համաճարակ, որը Ստամբուլում բեռնափոխադրումների կազմակերպություն ունի: Ես եղել եմ Արդվինի նահանգում գտնվող նրա գյուղում, ուր բոլորը խոսում են Համաճարակի բարբառով: Հարցրի՞ ի՞նչ տպավորություն է ստացել Հայաստանից, նա անսպասելի պատասխան տվեց: Ասաց, որ զարմանում է, որ այստեղ հյուրանոցներում և սրճարաններում մարդիկ թերթ չեն կարդում: Իսկապես, Թուրքիայում, նույնիսկ փոքրիկ քաղաքների սրճարաններում, վարսավիրանոցներում հաստատվոր թերթեր կան դրված: Թուրքիան գրագետ և ընթերցասեր հասարակություն է ձևավորում: Մենք ի՞նչ ենք դաստիարակում, թերթ ու գիրք չկարդացող հասարակություն: Գրախանութները փակեցինք ու աճող տերնդին մեղադրում ենք, որ գիրք չեն կարդում:

Այդ գրույցից հետո մտածեցի հյուրանոցներում վաճառքի դնել «Հրեղեն ձին» և «Թագավորի երազները» գրքերի անգլերեն և գերմաներեն ընտրանիները, որոնք տպագրվել են մի քանի տարի առաջ: Եվ շատ զարմացա, որ նույնիսկ քաղաքի կենտրոնի շքեղ հյուրանոցներում, որոնք լեվելցուն էին օտարազգի հյուրերով, գրքերի վաճառքի փոքրիկ անկյուն անգամ չկար: Իսկ հուշանվերներ վաճառողները գրքեր չէին ընդունում, չէր կարելի: Մամուլում ահագնություն ենք, որ արտասահմանում տանում ենք տալիս Ադրբեջանի հետ քարոզչական պատերազմում, բայց հենց Երևանի կենտրոնի հյուրանոցներում, փաստորեն, արգելվում է Հայաստանի տեսարժան վայրերին, եկեղեցիներին, մեր պատմությանը, մշակույթին, Մեծ եղեռնին, հենց Ղարաբաղին նվիրված վերջին տասնամյակում տարբեր լեզուներով հրատարակված բարձրարժեք և ճաշակով ալբոմների ու գրքերի վաճառքը: Ինչու՞: Գուցե հյուրանոցների տերերը թքած ունեն այդ գրքերի վաճառքից ստացվելիք եկամտի վրա, քանզի նրանք առանց այդ էլ առեղծվածներ են ստանում: Բայց այդ դեպքում չգիտեմ, թե մանր-մունր հուշանվերների առևտրից ինչու՞ չեն հրաժարվում և միայն գրքերի վաճառքից են խուսափում: Կարծում եմ՝ հարցը պետք է օրենսդրորեն կարգավորել և պարտադրել, որ գրեն մեծ ու միջին հյուրանոցներն ունենան գրքերի վաճառքի բաժին, նաև հյուրանոցներն ու սրճարանները բաժանորդագրվեն որոշակի քանակի թերթեր:

Ռ. Ե. - Դու էլ թերթ ես հրատարակում և անվճար բաժանում: Երբեմն ինձ էլ ես տալիս: Պիտի գովեն, թեև գովասանքից խուսափում ես, շատ հետաքրքիր թերթ է: Պատմիր թերթի մասին:

Ս. Վ. - «Ձայն համաճարակն» ամսաթերթը Հայաստանի «Համաճարակ» հայրենակցական-բարեգործական հ/կ թերթն է, հիմնադրման օրից՝ 2004 թվականից, ես եմ գլխավոր խմբագիրն ու միակ աշ-

խատակիցը: Խմբագրություն չունեն, թերթը տանն եմ պատրաստում և տանում տպարան: Թերթը հիմնականում նվիրված է Աբխազիայի, Կրասնոդարի երկրամասի, Ղազախստանի, Ղրղզստանի, Թուրքիայի քրիստոնյա և մահմեդական համաճարակի անցյալին ու ներկային, բարբառին, բանահյուսությանը, ազգագրությանը: Անվճար բաժանվում է նրանց, նաև բոլոր ցանկացողներին, ուղարկվում է Սփյուռքի գաղթօջախներ: Ասեմ, որ նրանից հաճախ են մյուս թերթերը, մասնավոր Սփյուռքում, նյութեր արտատպում: Իսկ 2010-ին, որպես խմբագիր արժանացա Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության, Հայաստանի Սփյուռքի նախարարության և ժուռնալիստների միության բարձրագույն մրցանակին, ինչպես նաև Ռուսաստանի հայերի միության մեդալին:

Ռ. Ե. - Լավ հիշեցրիր, քեզ մոռացա շնորհավորեմ. իմացա, որ հենց վերջերս ստացել ես Սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարգյան» մեդալը, նաև Հայաստանի Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի ոսկյա հուշանվերով: Ինչի՞ համար ես տրվել:

Ս. Վ. - Ես ինձ գովեմ: Հարմար չէ: Ավելի լավ է կարդամ, թե ընդհանրապես ինչի համար ես տրվում այդ մեդալները: Ուրեմն՝ «Վիլյամ Սարգյանը» տրվում է «Սփյուռքում հայ մշակույթի տարածմանը նպաստող գործունեության, այդ բնագավառում ակնառու նվաճումների ու ձեռքբերումների, ստեղծագործական գործունեությանը Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման, Հայաստան-Սփյուռք և Սփյուռքի միջհամայնքային կապերի ամրապնդման գործում մեծ ներդրում ունենալու համար»: Իսկ մեծ մարդասեր, կաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Ֆրիտյոֆ Նանսենի ոսկյա հուշանվերով տրվում է «Հասարակական-քաղաքական, մարդասիրական սկզբունքների հաստատման և Հայոց ցեղասպանության դատապարտման ուղղությամբ ծավալած գործունեության համար»:

Ռ. Ե. - Երեք տասնամյակ զբաղվում ես ներքին սփյուռքի հարցերով, նաև Թուրքիայի կրոնափոխ հայերով: Հարյուրավոր հոդվածներ ես գրել: Հիշում եմ, 1984թ. ժուռնալիստների միությունում, Գրողների միությունում, Ազգագրության ինստիտուտում ինչպիսի ոգևորությամբ էիր պատմում Ղազախստանում, Ղրղզստանում, Պամիրի լեռներում քո հայտնաբերած կրոնափոխ համաճարակների մասին: «Ձայն համաճարակն» ժողովածուներից մեկն էլ նրանց էիր նվիրել:

Ս. Վ. -Ոչ մաքրողությամբ, 3-րդ հատորի կեսը պատմում էր Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի քրիստոնյա համաճարակների, մյուս կեսը՝ 1944թ. Աջարիայից Սիջին Ասիա աքսորված համաճարակների մասին: Նրանց է նվիրված նաև 2009թ. ԵրԳՀ-ի հրատարակած «Կրոնափոխ համաճարակների բարբառը, բանահյուսությունը և երգերի լեզուները» գրքիս մեծ մասը. մի մասն էլ՝ Թուրքիայի կուրդի և Բոքչկայի գավառներում իմ հայտնաբերած 20-ից ավելի գյուղերում բնակվող հայախոս համաճարակների խոսվածքին և բանահյուսությանը: Չորս անգամ եղել եմ այդ գյուղերում, նաև Ռիզեի

նահանգի արդեն թուրքախոս համաճարակների մոտ: Այս ամառ եղա Էրզրումի նահանգում, որտեղ էլ 10-ից ավելի գյուղ կա, որոնց բնակիչներն այժմ թուրքախոս դարձած համաճարակներ են, նրանք պահպանել են հայերեն մի քանի բառեր, նաև իրենց հատուկ շուրջպարերը: Ջավախքը 1829թ. Ռուսաստանին անցնելուց հետո, երբ Էրզրումի նահանգի հայերը գաղթեցին այնտեղ, թուրքերը Չամլըխեմ-չինից քերեցին և նրանց դատարկված գյուղերում վերաբնակեցրին կրոնափոխ համաճարակների: Հիմա այդ նյութերն եմ հրատարակության պատրաստում, նաև Մեծ եղեռնից վերապրած համաճարակների հուշերն եմ ուզում տպագրել, այդ թվում՝ անվանի դերասան Արման Կոթիկյանի մասին պատմող գրքույկ, մինչև Տեր-Ջոր հասած մի համաճարակ կնոջ հուզիչ պատմությունը: Ասեմ, որ ինձ հաջողվեց այսքան տարի հետո Աբխազիայում, Սոչիում, Լիտվայում, Բելյուրում, ԱՄՆ-ում գտնել այդ տառապած կնոջ սերունդներին: Նման շատ նյութեր ունեմ, բայց ցավն այն է, որ ժամանակը չի հերիքում, բացի այդ՝ տպագրելու համար պիտի հովանավորներ փնտրեմ, ինչը շատ է մեղում, ամեն անգամ ինձ նվաստացած եմ զգում:

Ռ. Ե. - Սերգեյ, շատ բաներից խոսեցինք, բայց քո մանկական պատմվածքները մոռացանք: Վերջերս դրանցից մի քանիսը թարգմանել եմ ռուսերեն և շատ եմ ափսոսում, որ ժամանակ չես գտնում մանուկների համար գրելու: Գիտեմ, որ պատմվածքներդ ընդգրկված են 4-րդ և 5-րդ դասարանների դասագրքերում: Ի՞նչ նորություններ ունես:

Ս. Վ. - 1994թ. Ստամբուլում արևմտահայերենով հրատարակված իմ մանկական պատմվածքների ժողովածուն հասել է ԱՄՆ և ռեժիսոր Վարդան Գառնիկյան, պատմվածքներից մեկը հիմա բեմադրում է Նյու Ջերսիի նորաստեղծ հայկական տիկնիկային թատրոնում: Ռեժիսորից իմացա, որ դեռևս 1998թ. նա այդ պատմվածքը բեմադրել է Նյու Յորքում՝ պատանեկան թատրոնում: Ներկա է եղել Փարեզին Ա Ամենայն հայոց կաթողիկոսը և շատ է հավանել: Հետաքրքիր է, որ ԱՄՆ-ից վերադարձից հետո վեհափառն ինձ պատմեց այդ մասին: Այն ժամանակ ես ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետ-խորհրդի փոխնախագահն էի, բայց իմ մտքով չանցավ թե դա իմ գրած է, քանի որ վերնագիրը փոխված էր: Այդպիսի անակնկալներ շատ են լինում, մանավանդ Սփյուռքի մամուլում. հոդվածներ, գրքերից հատվածներ ու պատմվածքներ են արտատպում ու տեղյակ էլ չեն պահում: Հատկապես իմ «Հայաստանի մայրաքաղաքները» գրքից են շատ արտատպում, երբեմն էլ՝ ուրիշների անունով: Ես այս բաներին հուժկոտ եմ մոտենում, վտանգավորը անուղղելի սխալներն են, իսկ ուղղվող սխալների համար պետք չէ շատ մտահոգվել: Եվ, ընդհանրապես, կյանքում առաջնորդվում եմ հայտնի սկզբունքով՝ թե՛ կոչիլ չունես, շատ մի վշտանա, հիշիր նրանց մասին, ովքեր ոտք չունեն:

Հարցազրույցը Ռ. ԵՐԻԱԶԱՐՅԱՆԻ «Գրական թերթ», 2012, դեկտեմբերի 7

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐՎԵՅ ՎԻՐՂԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄԵՆԱԿԱՆ» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպություն: Գրասենյակ՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8: Գեղարխոս՝ (+374+10) 20 21 26: Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին: Լրատվության կամ մեքենայից դեպքում հղումը «Ձայն համաճարակին» պարտադիր է: Գրատարակվում է 2004թ. օգոստոսից:

«ДЗАЙН АМШЕНАКАН» (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации «АМШЕН» (г. Ереван), Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН. Издается с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. «HAMSHEN» Compatriotic-charitable public organization (Yerevan). «DZAYN HAMSHENAKAN». Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org